ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 610-Ա/2 «04» մայիսի, 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 72-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N 329-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի ապրիլի 12-ի նիստի արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունվարի 19-ի N 72-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրերի ֆինանսավորումը սկսել ըստ կից ցանկում նշված ժամկետների:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«04» մայիսի, 2023 թ.
N 610-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-ի N 72-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Անվանում	Շահառու	Կազմակերպություն	Ընդունող կազմակերպություն	Վերապատրաստման տևողություն
1.	23PTS-1D003	Կոբալտ-յոդացետիլենային կոմպլեքսների ստացում և հետազոտում	Բալյան Քրիստինե Վալերիկի	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ	Կալիֆորնիայի պետական համալսարան (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)	2023 թ. հուլիս - 2023 թ. օգոստոս (61 օր)
2.	23PTS-1C006	Վերջնական վիճակի բևեռացում չբևեռացված բարձր էներգիայի բախումների ժամանակ	Կարապետյան Ծովինար Գագիկի	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ	Բասկերի երկրի համալսարան (Իսպանիայի Թագավորություն)	2023 թ. սեպտեմբեր - 2024 թ. ապրիլ (213 օր)

3.	23PTS-6B005	Հայ միջնադարյան գրական-մշակութային ժառանգությունը և նորարարական տեխնոլոգիաները	Համբարձումյան Նաիրա Վալերիկի	ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ	Լոնդոնի Ռոյալ Հոլոուեյ համալսարան (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն)	2023 թ. սեպտեմբեր - 2024 թ. մարտ (182 օր)
4.	23PTS-2F007	Գամմա և կոշտ ռենտգենյան ճառագայթների համար նոր ամբողջովին թվային 3D պատկերող սարք	Հարությունյան Վարդան Գագիկի	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	Ազգային գիտահետազոտական խորհուրդ, ՆԻ նյութերի ձուլարան (Իտալիայի Հանրապետություն)	2023 թ. հուլիս – 2024 թ. հուլիս (366 օր)
5.	23PTS-1F002	Բուսական ծագման մետաբոլիտների հակաօքսիդիչ ակտիվության ուսումնասիրությունը միկրոգլիալ բջիջների կուլտուրաներում	Մինասյան Ալվարդ Մկրտիչի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Բուրգունդիայի համալսարան (Ֆրանսիայի Հանրապետություն)	2023 թ. սեպտեմբեր - 2023 թ. դեկտեմբեր (105 օր)
6.	23PTS-1F001	Կատալազի էքսպրեսիայի կարգավորումը բուսական ծագման մետաբոլիտներով միկրոգլիալ բջիջների in vitro մշակման պայմաններում	Սահակյան Նաիրա Ժորայի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Բուրգունդիայի համալսարան (Ֆրանսիայի Հանրապետություն)	2023 թ. հունիս - 2023 թ. օգոստոս (61 օր)